

ք.Երևան

« 29 » « 11 » 2019թ.

Շրջակա միջավայրի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի ժ/պ Վ.Զիլավյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պետական մարմին», մի կողմից, և «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս տնօրենի ժ/պ Ա.Լազարևի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Կազմակերպություն», մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով Կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1515-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1373-Ն որոշումը, ինչպես նաև կողմերի միջև 2019 թվականի փետրվարի 14-ին կնքված «ԲՆ-ԴՇ-19/02» ծածկագրով պայմանագրի 8.2 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

- 1.1. Կողմերը որոշեցին 2019 թվականի փետրվարի 14-ին կնքված «ԲՆ-ԴՇ-19/02» ծածկագրով պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝
 - 1.1.1. Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելված N°1-ի «Միջոցառումներ» աղյուսակում՝
 - ա) 1-ին կետի «կատարման ենթակա գործառույթների նկարագիրը» սյունյակում «37360» թիվը փոխարինել «40480» թվով,
 - բ) 2-րդ կետի «կատարման ենթակա գործառույթների նկարագիրը» սյունյակում «354400» թիվը փոխարինել «215428» թվով:
 - 1.1.2. Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելված N°2-ի «ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագիր» աղյուսակում «Արդյունքի չափորոշիչներ» սյունյակի՝
 - ա) «Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի իրականացում՝ ՀՀ 6 ջրավազանային կառավարման տարածքի 14 գետավազանի 53 ջրային օբյեկտի 127 դիտակետում ջրերի որակը բնութագրող 40-60 աղտոտիչների վերաբերյալ տվյալներ, ցուցանիշ» տողի, «Տարի» սյունյակի «37360» թիվը փոխարինել «40480» թվով,
 - բ) «Մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի իրականացում՝ ՀՀ 10 քաղաքում 15 դիտակայանում և 188 դիտակետում օդի աղտոտվածությունը բնութագրող 2-6 աղտոտիչների վերաբերյալ տվյալներ, ցուցանիշ» տողի, «Իննն ամիս» և «Տարի» սյունյակների համապատասխանաբար «268359» և «354400» թվերը փոխարինել «215428» թվով:

2. Այլ պայմաններ

- 2.1. Համաձայնագրի պայմանները տարածվում են 2019 թվականի հոկտեմբերի 12-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:
- 2.2. Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Շրջակա միջավայրի նախարարություն

ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք
ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011018661
ՀՎՀՀ 02507198

Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղարի ժ/պ

Վ.Զիլավյան

(Ստորագրություն)

Կ.Տ.



ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ

ք.Երևան, Չարենցի 46

ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900018003302
ՀՎՀՀ 02659596

«Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/պ

Ա.Լազարև

(Ստորագրություն)

Կ.Տ.



(Additional handwritten signatures)